

ՀՀ-ՌԻՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Լիլիթ Մելիքսեթյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

Ցանկացած երևույթ ճանաչելու և դրա զարգացման միտումները կանխատեսելու համար անհրաժեշտ է վեր հանել ձևավորման և զարգացման հիմնական գործոնները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կառուցելու հիմնավոր օրինաչափություններ երևույթի զարգացման արդյունքների և միտումների վերաբերյալ, անել իրատեսական առաջարկություններ այն կատարելագործելու ուղղությամբ: Ասվածը վերաբերում է նաև ՀՀ հանրաքվեի իրավական ինստիտուտին, քանի որ պետականության նախորդ շրջաններում կա՛մ ընդհանրապես չկար հանրաքվեի ինստիտուտ, կա՛մ այն ձևական բնույթ էր կրում:

Արդի հետազոտություններում հանրաքվեի՝ որպես սահմանադրական-իրավական ինստիտուտի ձևավորման ու կայացման պատմության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում դեռևս անհրաժեշտ խորությամբ ու ընդգրկվածությամբ չեն ուսումնասիրվել: Հետազոտական միակ փորձը կարելի է համարել Ռ.112Ռ. Մարանդյանի «Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության իրացման ձև Հայաստանի Հանրապետությունում» թեկնածուական ատենախոսությունը (2017 թ.), որում հեղինակը համառոտ ներակայցրել է Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի ձևավորման ու զարգացման պատմությունը, նշել հանրաքվեի կիրառման դեպքերը մեզանում:

Ընդ որում, ատենախոսը Հայաստանում հանրաքվեի ինստիտուտի պատմությունը փորձել է ներակայացնել ըստ Ռուսաստանի Ղաշնությունում հանրաքվեի զարգացման պատմական փուլերի¹: Ռ. Մարանդյանը գրում է. «Քանի որ մեր երկրի պետաիրավական համակարգի պատմական զարգացումը շուրջ յոթանասուն տարի ընթացել է խորհրդային քաղաքականության հունով, ուստի Հայաստանում հանրաքվեի պատմությունը կարելի է դիտարկել Ռուսաստանում հանրաքվեի զարգացման պատմության համատեքստում: Ռուս հեղինակների կողմից այն բաժանվում է հետևյալ փուլերի՝ 1) մինչհեղափոխական շրջանի ժողովրդական քվեարկություններ, 2) խորհրդային շրջան, որը պայմանականորեն կարելի է բաժանել 1917-1936 թթ. և 1936-1990 թթ., 3) հետխորհրդային շրջան՝ 1990-1993 թթ., 4) ժամանակակից շրջան՝ 1993 թ. դեկտեմբերից մինչ օրս: Բազմաթիվ սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով հանրաքվեն Հայաստանում չի անցել զարգացման վերոնշ-

¹ Ռուս իրավագետները Ռուսաստանում հանրաքվեի իրավական ինստիտուտի զարգացման պատմության մեջ առանձնացնում են հետևյալ փուլերը՝ 1) մինչհեղափոխական (մինչև 1917 թ.), 2) խորհրդային, 3) հետխորհրդային (1990-1993 թթ.), 4) ժամանակակից (1993 թ. դեկտեմբերից մինչ օրս): Ընդ որում Ռ. Մարանդյանը այս պարբերացումը վերցրել է www.superinf.ru համացանցային կայքից, որը հուսալի ու հավաստի համարվել չի կարող:

յալ բոլոր փուլերը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայաստանի Երրորդ Հանրապետությունում հանրաքվեի զարգացման պատմությունը կարելի է բաժանել երկու փուլի՝

Հետխորհրդային: Այս փուլն սկսվել է 1991 թ. անկախության հանրաքվեով և ավարտվել 1995 թ. հուլիսի 5-ին Սահմանադրության ընդունմամբ: Սա խորհրդային պետաիրավական համակարգը նորով փոխարինելու և ազգային օրենսդրության հիմունքները ձևավորելու փուլն է:

Ժամանակակից: Այս փուլն ընդգրկում է 1995 թ. մինչ օրս ընկած ժամանակահատվածը: Սա հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության կարևորագույն ինստիտուտի դերակատարության բարձրացման և հասարակության կողմից դրա նշանակության աստիճանական կարևորման փուլն է¹:

Հայաստանում հանրաքվեի պատմության փուլային բաժանման իր այս մոտեցումը հեղինակը բացատրում է երկրում 70 տարի շարունակ խորհրդային քաղաքական ենթակայությամբ: Ընդ որում, նա, կասկածելով իր իսկ ընտրած փուլային բաժանման իրավաչափությունը, անտեսելով նորագույն շրջանում հայոց պետականության առանձնահատկությունները, արդարացրել է միայն Երրորդ Հանրապետությունում հանրաքվեի ինստիտուտի զարգացման պատմությունը՝ այն տրոհելով երկու շրջանի:

Մեր կարծիքով, նման մոտեցումը չունի ոչ մի պատմական ու գիտական հիմք: Նախ այն պատճառով, որ, ճիշտ է Խորհրդային Հայաստանը գոյատևել է 70 տարի, սակայն հայոց պետականության նորագույն շրջանը ունի 100 տարվա պատմություն: Երկրորդ. անհասկանալի են Հայաստանի Երրորդ Հանրապետության շրջանի հանրաքվեի ինստիտուտի «հետխորհրդային» և «ժամանակակից» փուլային անվանումները: Հարց է առաջանում. նախ՝ ինչու՞ «հետխորհրդային», իսկ արդյո՞ք «ժամանակակիցը» հետխորհրդային չէ: Ակնահայտ է տրամաբանական հակասությունը: Երրորդ. որո՞նք են նման փուլային բաժանման հիմքում դրված ժամանակագրական չափանիշները: Քանի որ խոսքը հանրաքվեի ինստիտուտի պատմության մասին է, ապա այս հարցադրումը մնում է անպատասխան:

1991-1995 թթ. ընդգրկող ժամանակաշրջանն անվանելով «հետխորհրդային փուլ»՝ Ռ.Մարդանյանը դրա էությունը բնութագրում է որպես «խորհրդային պետաիրավական համակարգը նորով փոխարինելու և ազգային օրենսդրության հիմունքները ձևավորելու» շրջան²: Նման բնութագիրն ավելի հարմար է ընդհանուր պետաիրավական համակարգի պատմական զարգացման, բայց ոչ իրավական կոնկրետ ինստիտուտի ձևավորման ու կայացման փուլի համար:

Իրավական կոնկրետ ինստիտուտների ձևավորման ու զարգացման ընթացքը, անշուշտ, պայմանավորված է ընդհանուր պետաիրավական զարգացման փուլերով, սակայն բուն իրավական ինստիտուտի ձևավորման ու վերակառուցման փուլերը կարող են չհամընկնել ընդհանուրի հետ մի շարք պատճառներով: Իրավական ինստիտուտի պատմությունը կարող է սկիզբ առնել նախորդող պատմական շրջանից, տվյալ դեպքում, օրինակ՝ Խորհրդային Հայաստանից: Բացի այդ, իրավական ինստիտուտը կարող է ձևավորվել ավելի ուշ, չհամընկնել պետաիրավական զարգացման ընդհանուր պատմության փուլերի հետ, եթե, օրինակ՝ այդ ինստիտուտն

¹ Տե՛ս Մարդանյան Ռ. Ռ., Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության իրացման ձև Հայաստանի Հանրապետությունում, թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ, Երևան-2017, էջ 33-34:

² Տե՛ս նույն տեղում, նշվ. աշխ., էջ 32-36:

ամրագրող օրենսդրական ակտն ընդունվել է պետաիրավական պատմության հետազա փուլում:

Հանրաքվեի ինստիտուտի կայացման ու զարգացման փուլային բաժանման թերությունները հաստատում են, որ հիմնահարցն ունի հատուկ և հանգամանալից հետազոտման կարիք: Առաջին հերթին անհրաժեշտ է ընտրել պատմական գործընթացի փուլային բաժանման ոչ թե սուբյեկտիվ, կամայական, այլ օբյեկտիվ չափանիշներ:

Հայոց պետականության իրավական զարգացման պատմության համատեքստում նորագույն ժամանակաշրջանում պարբերացման չափանիշներ են քաղաքական պատմության և օրենսդրության զարգացման փուլերը: Նորագույն դարաշրջանում Հայաստանի պետաիրավական համակարգի պատմական զարգացումն անցել է երեք հիմնական փուլեր՝

ա) Առաջին Հանրապետություն (1918-1920 թթ.),

բ) Երկրորդ սոցիալիստական հանրապետություն (1920-1990 թթ),

գ) Երրորդ Հանրապետություն (1990 թ. մինչև մեր օրերը):

Յուրաքննաչուր հանրապետության պետաիրավական զարգացումը փուլերի բաժանման դեպքում չափանիշներ են համարվում պետության ձևի փոփոխումը, տնտեսական զարգացումը և սեփականության ձևերը, քաղաքական, գաղափարախոսական, արժեքային կողմնորոշումները, սահմանադրության մեջ կատարված լրացումներն ու փոփոխությունները և այլն:

Հանրաքվեն արդի իրավական համակարգերում, որպես կանոն, սահմանադրական ինստիտուտ է: Հետևաբար, դրա ձևավորման ու զարգացման գործընթացում փուլերի բաժանման ժամանակակազրական չափանիշներ պետք է համարվեն նոր սահմանադրությունների ընդունումը կամ գործող սահմանադրությունների մեջ փոփոխությունների կամ լրացումների կատարումը, հանրաքվեին վերաբերող նոր օրենքների ընդունումը, դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելը: Սակայն իրավական կոնկրետ ինստիտուտի պատմաիրավական զարգացումը կարող է համընկնել պետության, դրա սահմանադրական զարգացման փուլերի հետ, բայց նաև շեղվել դրանցից, որովհետև հանրաքվեի իրավական հիմունքների սահմանադրական կարգավորման մեկ տեսլականի պայմաններում իրավական ինստիտուտի բովանդակությունը կարող է էականորեն վերակառուցվել, ինչը ազդարարում է ինստիտուտի զարգացման նոր փուլ: Հենց նշված հանգամանքներն են հիմք տալիս քննադատելու Ռ. Մարդանյանի վերը նշված մոտեցումը, որում «հետխորհրդային» անվանումը վերցված է ռուսական աղբյուրներից, որոնցում, սակայն, ՌԴ-ում այդ փուլն ավարտվում է 1993 թ.: Այդ տարվա դեկտեմբերին ՌԴ-ում ընդունվել է «Սահմանադրության նախագծի համաժողովրդական քվեարկության մասին կանոնակարգը»¹: Այսպիսով, եթե Հայաստանի Հանրապետությունում 1991 թ. ապրիլի 2-ին ընդունել է «Հանրաքվեի մասին» օրենք, ուրեմն հենց դա պետք է համարել նախորդ փուլի ավարտ և նոր փուլն ազդարարող սկիզբ:

Վերը նշված մեթոդաբանական ուղենիշները նկատի ունենալով՝ Երրորդ Հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի ձևավորման ու զարգացման փուլերը պետք է բաժանվեն հետևյալ կերպ.

Առաջին փուլը՝ 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1991 թ. ապրիլի 2-ը, կարելի է բնութագրել որպես **հետխորհրդային ազատական ժողովրդալիշխանություն՝**

¹ Ст' u Собрание актов Президента и правительства РФ. 1993, № 42, ст. 3995:

խորհրդային հանրաքվեի ինստիտուտով ժամանակաշրջան, երբ «Անկախության Հռչակագիրը» ունեցավ հեղափոխական վերակառուցման դեր՝ ժխտելով «սոցիալիստական ժողովրդավարության» աղճատված հայեցակարգը, ամրագրելով ժողովրդաիշխանության ավանդական, արևմտյան-ազատական հայեցակարգի հիմնադրույթները: Սակայն դրա կենսագործման համար օրենսդրական քայլեր չիրականացվեցին, հետևաբար՝ հանրաքվեի ինստիտուտը պահպանեց խորհրդային սահմանադրական տեսությանը և կարգավորմանը բնութագրական գծերը:

Խորհրդային սահմանադրությունների գնահատման հարցում կարելի է միանշանակ համաձայնվել Վ.Վ. Կոմարովայի հետևյալ կարծիքին. «...հանրաքվեի մասին նորմը հռչակելով որպես ժողովրդաիշխանության իրացման կառուցակարգի մաս՝ այդ Սահմանադրությունը նույնիսկ չէր սահմանում քաղաքացիների իրավունքը՝ մասնակցելու դրան, ինչպես նաև չէր նախատեսում հանրաքվեի նշանակում քաղաքացիների պահանջով: Այդպիսով, ինքը՝ հանրաքվեի ինստիտուտն ամրագրող սահմանադրական նորմը, դրա իրականացման ընթացակարգը կարգավորող օրենքի բացակայության պայմաններում վերածվում էր սովորական ձևականության»¹: Ընդունելով այդ քննադատությունը՝ պետք է նշել, որ Վ.Վ. Կոմարովան հանրաքվեի սոցիալիստական ինստիտուտը համարում է «ժողովրդաիշխանության կենսագործման կառուցակարգի մաս»: Այսպիսի տեսակետը, կարծում ենք, ճիշտ չէ, որովհետև «սոցիալիստական ժողովրդավարության» և «ժողովրդաիշխանության» ազատական հայեցակարգերն էականորեն տարբերվում են, և առաջինը երբեք էլ չի ենթադրում հանրաքվեն՝ որպես ժողովրդաիշխանության իրացման բաղադրիչ: Չնայած պաշտոնական սահմանադրական դոկտրինը կարող էր նաև գովազդել հանրաքվեի սոցիալիստական ինստիտուտը:

Սահմանադրական նորմերի խորքային վերլուծությունից հանգում ենք այն հանգաման, որ հանրային կառավարման հիմքում ընկած էր միայն պետական ձևը, իսկ հասարակական խնդիրների կարգավորումը ենթադրում էր միայն պետական կառավարման համակարգով միջնորդավորված լուծումներ: Այստեղ հանրաքվեն ընդամենը լրացնում էր պետական կառավարումը, որովհետև դրա անցկացումը պետական կառավարման քաղաքական հիմքը կազմող խորհուրդների, մասնավորապես գերագույն խորհուրդների քնահաճույքից կախված հայեցողական լիազորություն էր: Խորհրդային սահմանադրական կարգավորմամբ նույնիսկ խորհուրդների ընտրությունները չէին դիտարկվում կառավարման անմիջական ձև²:

Երրորդ Հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի առաջին փուլը (1990 թ. օգոստոս - 1991 թ. ապրիլի 2) կարելի է անվանել հետխորհրդային: Դա բնութագրական է միայն այդ ժամանակաշրջանին, քանի որ զուտ ժամանակագրական առումով այն չի մտնում Խորհրդային Հայաստանի պետաիրավական պատմության շրջանի մեջ: Մյուս կողմից՝ այդ շրջանում գործում էր ՀԽՍՀ 1978 թ.

¹ St' u **Комарова В.В.** Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 188:

² ՀԽՍՀ Սահմանադրության 10-րդ գլխի, որ կոչվում էր «Ընտրական սիստեմը», 85-րդ հոդվածը սահմանում էր ընդամենը ընտրական համակարգի սկզբունքները՝ ընդհանուր, հավասար, ուղղակի, ինչպես նաև գաղտնի քվեարկություն: Սահմանադրության մեջ բացակայում էր ընտրությունների քաղաքական իրավական պատշաճ գնահատականը, այն է՝ որպես ուղղակի ժողովրդաիշխանության ձև (տե՛ս Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք): Ընդունվել է ՀՍՍՀ 9-րդ գումարման գերագույն սովետի արտահերթ յոթերորդ նստաշրջանում 1978 թ. ապրիլի 14-ին. Եր., 1978, հոդված 85, էջ 32):

Սահմանադրությունը, որը միակ իրավական աղբյուրն էր հանրապետական հանրաքվեի հարաբերությունների կարգավորման ոլորտում, ուրեմն՝ Երրորդ Հանրապետության այդ փուլում հանրաքվեի ինստիտուտն իր բովանդակությամբ զուտ խորհրդային երևույթ էր:

Երկրորդ փուլը ընդգրկում է 1991 թ. մինչ 1995 թ. Սահմանադրության ընդունումն ընկած ժամանակամիջոցը: 1991 թ. ապրիլի 2-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը: Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասն ամրագրում էր հանրաքվեի հասկացությունը. «Հանրաքվեն ժողովրդի իշխանությունն անմիջականորեն իրականացնելու՝ պետական կյանքի առավել կարևոր հարցեր լուծելու, ՀՀ օրենքներ և որոշումներ ընդունելու, հասարակական կարծիքը բացահայտելու միջոց»¹: «Հանրաքվեի մասին» 1991 թ. ՀՀ օրենքը նախատեսում էր միայն համապետական հանրաքվե, իսկ ըստ արդյունքների իրավական նշանակության՝ նախատեսված էին և՛ որոշիչ (իմպերատիվ), և՛ խորհրդատվական հանրաքվեները: Հանրաքվեի ինստիտուտի այդ մոդելում նախատեսված էր իրավաստեղծ հանրաքվեի միայն մեկ տեսակը՝ օրենքներ և այլ իրավական ակտեր (որոշումներ) ընդունելու հանրաքվեն՝ առանց սահմանդրական՝ որպես առանձին տարատեսակի հանրաքվե: Օրենսդրական հանրաքվեի հնարավոր տեսակները՝ իրավամերժող և իրավահաստատող, սահմանված էին: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը նախատեսում էր **մինչօրենսդրական հանրաքվե**², և հանրաքվեի անցկացման նախաձեռնության երկու կարգ՝ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից և ՀՀ քաղաքացիների³: Չնայած օրենքը նախատեսում էր քաղաքացիների կողմից ֆակուլտատիվ հանրաքվեի անցակացման նախաձեռնության իրավունքը, սակայն այդ ընթացակարգում նկատվում է Գերագույն խորհրդի գերակայությունը, ինչը պայմանավորված էր օրենքի մի շարք դրույթների անորոշ ձևակերպումներով:

Այսպիսով, 1991 թ. ապրիլի 2-ի «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքն ազդարարեց հանրաքվեի իրավական ինստիտուտի զարգացման նոր փուլի սկիզբը: Օրենքի բովանդակային կողմերը հիմք են տալիս ենթադրելու, որ այն բավականին առաջադիմական, ժողովրդավարական օրենք էր: Հետևաբար, 1991 թ. մինչ 1995 թ. ընկած տարիները կարելի է համարել Երրորդ Հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի՝ հիմնական բովանդակային չափանիշներով ժողովրդավարական օրենսդրական կարգավորման և դրա գործնական կայացման ժամանակաշրջան:

Երրորդ փուլը (1995 թ. մինչև 2001 թ.) կարելի բնութագրել հանրաքվեի սահմանադրական իրավական կարգավորման շրջան: 1995 թ. Սահմանադրությունը սկզբնավորեց նոր տեսակի՝ սահմանադրական պարտադիր հանրաքվեի ինստի-

¹ Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 119:

² Որոշ հեղինակներ հանրաքվեներն ըստ անցկացման ժամանակի դասակարգում են մինչօրենսդրական և հետօրենսդրական տեսակների: Մինչօրենսդրական հանրաքվեն անցկացվում է մինչև օրինագծի բուն ընդունումը՝ հաճախ որպես խորհրդատվական: Հետօրենսդրական անցկացվում է օրինագծի ընդունումից հետո: Փաստորեն դա նույն մերժողական հանրաքվեն է (տե՛ս **Комарова В.В.** Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 81; **Синцов Г.В.** Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 80):

³ Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 121-123, հոդվածներ 5, 9-15:

տուտը: Դրանում ամրագրվեց ժողովրդաիշխանության սկզբունքը: Սահմանադրական օրենսդրությունը հանրային իշխանության իրականացման զուտ պետական կառավարման համակարգից անցում կատարեց, այսպես կոչված, իշխանություն ձևավորելու խառը համակարգին, որը, իր հիմքում ունենալով ժողովրդաիշխանության սկզբունքը, իրականացվում էր երկու առանձին կառուցակարգերի միջոցով՝ անմիջական՝ ուղղակի և միջնորդավորված՝ անուղղակի: 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ հանրաքվեի իրավական կարգավորման օրենսդրական համակարգը ստացավ ամբողջական նկարագիր («Սահմանադրություն, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք): Սակայն պետք է նշել, որ հանրաքվեի սահմանադրական կարգավորումը շատ ընդհանուր էր:

Չորրորդ փուլն ընդգրկում է 2001 թ. մինչև 2015 թ. ընկած ժամանակաշրջանը, երբ կատարվեց հանրաքվեի իրավական ինստիտուտի օրենսդրական վերակառուցում, որը հանրաքվեի արդյունավետության հիմնական իրավական չափանիշների առումով հետընթաց արձանագրեց: Դրա վառ օրինակներից է հանրաքվեի անցկացման նախաձեռնող սուբյեկտների հիմնահարցը, որում «Հանրաքվեի մասին» 2001 թ. ՀՀ օրենքը զգալիորեն թերի էր, քանզի չէր նախատեսում հանրաքրային հանրաքվեի ոչ մի տարբերակ: Եթե ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը ժողովրդին ճանաչում է իշխանության տեր, իսկ հանրաքվեն՝ որպես դրա իրականացման հատուկ ձև՝ չնախատեսելով այդ իրավունքի իրականացման սեփական իրավական կարողություն, իր ուժերով հանրաքվե նախաձեռնելու իրավական հնարավորություն, ապա նման ժողովրդաիշխանության համակարգը կարելի է համարել աղձատված, հռչակագրային: Այս տեսանկյունից կարելի է համաձայնվել, որ «Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվե անցկացնելու ինստիտուտն առավել պատասխանատու է դարձնում իշխանության օրենսդիր ճյուղի գործունեությունը, քանզի յուրաքանչյուր դեպքում, երբ խորհրդարանը նախաձեռնում է հանրության համընդհանուր կարծիքն անտեսող օրինագծի ընդունում, ապա հարկադրված է ելակետ ընդունել այն իրողությունը, որ դրան արդեն կարող է հաջորդել քաղաքացիական նախաձեռնության կարգով նույն իրավակարգավորման մոտեցումները ժխտող օրինագծի ընդունում՝ հանրաքվեի միջոցով»¹:

Այսպիսով, օրենսդիրը 2001 թ. սեպտեմբերի 12-ին ընդունեց «Հանրաքվեի մասին» օրենք, որի և 1991 թ. օրենքի համեմատությունը հաստատում է, որ առաջինը հանրաքվեի հարաբերությունների կարգավորման հարցում արձանագրել է հակաժողովրդավարական, հետընթացային միտումներ՝ հանրաքվեն վերածելով հանրային իշխանության քմահաճույքից կախված ֆակուլտատիվ միջոցի՝ զրկելով դրան ժողովրդաիշխանության ձևի արդյունավետության էական օրենսդրական հատկանիշներից:

Հինգերորդ փուլը ներառում է 2015 թթ. սահմանադրական բարեփոխումները, և ցանկալի կլինե՞ր այն տեսնել որպես հանրաքվեի իրավական ինստիտուտի ժողովրդավարական չափանիշների խեղաթյուրումների վերացման ակնկալիքների շրջան: Կատարելագործման կարիք ունեն հատկապես հանրաքվեի արդյունավետության ու գործունեության այնպիսի իրավական չափանիշներ, ինչպիսիք են՝ անցկացման մակարդակները, անցկացման պարտադիրությունը և առարկան, անց-

¹ Գ. Դանիելյան, Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները// Պետություն և իրավունք, 2014, թիվ 3-4 (65-66), էջ 17-18:

կացման նախաձեռնող սուբյեկտների հարցերը (հանրագրային հանրաքվե նախատեսված չէ) և այլն:

Այսպիսով, հանրաքվեի ինստիտուտի փուլային զարգացման համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս անդրադարձնալու նշված ինստիտուտի կատարելագործման առավել էական միտումներին՝

- աստիճանաբար ընդլայնվում է հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը,

- իրավաչափ է համարվում նաև խորհրդատվական հանրաքվեներ անցկացնելը,

- հստակեցվում է ինչպես հանրաքվեի դրվող, այնպես էլ հանրաքվեի ոչ ենթակա հարցերի շրջանակը,

- առավել հստակ են տարանջատվում օրինաստեղծ գործունեության հանգեցնող, սոցիալ-քաղաքական առանցքային հարցադրումներին նվիրված և գործադիր իշխանության ոլորտին առնչվող հանրաքվեները և այլն: Վերը նշված միտումները հստակ պատկերացում են տալիս հանրաքվեի ինստիտուտի զարգացման մասին:

ПРОБЛЕМА СТАДИИ ПРАВОВОГО ЗАКРЕПЛЕНИЯ И СТАНОВЛЕНИЯ ИНСТИТУТА ОБЩЕГОСУДАРСТВЕННОГО РЕФЕРЕНДУМА В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лилит Меликсетян

Аспирант Академии государственного управления РА

В статье на основе теоретически и исторически правильных критериев периодизации истории развития референдума в РА критикуется имевшая в литературе версия по этому вопросу и выдвигается новая концепция периодизации правового регулирования и становления конституционно-правового института референдума в РА. Согласно этой концепции развитие института референдума в РА прошло пять стадий: первый – период провозглашения постсоветского либерального народовластия с советским институтом референдума (1990-1991 гг.); второй – период демократического законодательного закрепления и практического становления института референдума (1991-1995 гг.); третий – период неопределенного конституционного регулирования института референдума (1995-2001 гг.); четвертый – период отступления от демократических критериев института референдума через его перестройку текущим законодательством (2001-2014 гг.); пятый – период правовых ожиданий устранения деформации демократических признаков института референдума и совершенствование его критериев эффективности и действенности (2015 г.-д.н.д):

THE PROBLEM OF LEGISLATIVE CONSOLIDATION AND DEVELOPMENT OF NATIONAL REFERENDUM IN THE REPUBLIC OF ARMENIA

Lilit Meliksetyan

PhD student at the Academy of Administration of the Republic Armenia

Based on practical and historical correct criteries of periodization of the history of referendum in RA in this article the author criticized the version which had in the literature and nominate a new conception of periodization of legislative consolidation and development of constitutional-legal institution of referendum in the RA. According this conception development of the institution of referendum in the RA went through 5 levels: first–proclamation of post–soviet liberal democracy with a soviet institution of referendum (1990-1991), second–period of democratic legislative consolidation and practical development of the institution of referendum (1991-1995), third–period of undefined constitutional regulation of the institution of referendum (1995-2001), fourth–period of retreat from democratic criteries of the institution of referendum and rebuilding to current legislation (2001-2014), fifth–period of legal expectation of eliminating deformation of democratic sighns of the institution of referendum and improvement of criteries of effectiveness and efficacy (2015 - up to now).

Բանալի բառեր- *հանրաքվե, պատմություն, պարբերացում, փուլ, օբյեկտիվ չափանիշ, սահմանադրական զարգացում, բարելոխում, հակաժողովրդավարական խեղաթյուրում:*

Ключевые слова: *референдум, история, периодизация, стадия, объективный критерии, конституционное развитие, реформа, антидемократические искажения.*

Key words: *referendum, history, periodization, level, objective, criteries, constitutional development, reform, antidemocratic distortions.*